

Փիլիսոփայության գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Թեսսա Հոֆմանն

Մեծարգո պարոն Նախագահ,
„Պողոսյան,, հիմնադրամի հիմնադիրներ,
հարգարժան Ժան և Ալբերտ Պողոսյաններ,
Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Ֆեդերատիվ
Հանրապետության դեսպան Ձերդ Գերագանցություն Մորել,
Տիկնայք և պարոնայք

Թույլ տվեք հայտնել իմ անկեղծ երախտագիտությունը Հայոց
ցեղասպանության ճանաչմանը նպաստելու համար ինձ 2012 թվականի
Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակ շնորհելու որոշման
համար: Նաև շնորհակալություն եմ հայտնում մոտ 40 տարիների իմ անխոնջ
աշխատանքի գնահատման համար, որը կատարել եմ ցեղասպանության
վերաբերյալ հետազոտության ու կրթության բնագավառում` հիմնականում
կենտրոնանալով Արևմտյան Հայաստանում, Փոքր Ասիայում և Միջագետքում
Օսմանյան կայսրության կողմից ավելի քան երեք միլիոն բնիկ քրիստոնյաների
նկատմամբ իրագործված ցեղասպանության վրա: Ես կցանկանայի այս
գնահատանքին մասնակից դարձնել նաև իմ երկար տարիների հայ
գործընկերներին` Դոկտոր Ժիրայր Քոչարյանին և Վարուժան Բաբախանին:
Առանց նրանց նվիրված աջակցության ես երբեք չէի հասնի այս
ձեռքբերումներին, որում նաև իրենց ներդրումն ունեն գերմանացի և թուրք
գործընկերները: Իսկ ընդհանուր առմամբ, ես ցանկանում եմ
շնորհակալություն հայտնել ամբողջ հայ ազգին, որը հակառակ բոլոր
դիմակայությունների, շարունակում է պայքարել, որ իր նախնիների
նկատմամբ մոտ հարյուր տարի առաջ կատարված բազմաթիվ
հանցագործությունները միջազգայնորեն դատապարտվեն:

Արդարության և հիշողության հարցում հայերի աննահանջ պահանջները
իսկապես շատ ոգևորիչ են ոչ միայն անձամբ ինձ համար, այլ առավել
ցեղասպանություն ապրած հայերի սերունդների, ինչպես նաև Օսմանյան
կայսրությունում և օսմանների կողմից Իրանի գրավված տարածքներում
ապրող արամեալեզու քրիստոնյաների, Պոնտոսի և Փոքր Ասիայի հույների
համար: Ես խորապես համոզված եմ, որ հայ ազգի ներդրումը
ցեղասպանության կանխարգելման գործում չի կարող թերագնահատվել,
քանի որ Հայաստանի ժողովրդի և սփյուռքի համատեղ ջանքերը
ցեղասպանության ճանաչման հարցում հստակ ազդանշան են այն մասին, որ

անցյալի հանցագործությունները հիշվեն և դատապարտվեն գալիք սերունդների կողմից:

Ինձ համար ոգեշնչման երկրորդ աղբյուր և միաժամանակ մխիթարանք է հանդիսանում այն փաստը, որ աստիճանաբար մեծանում է Թուրքիայի այն քաղաքացիների թիվը, որոնք քննադատորեն են մոտենում իրենց երկրի անցյալին: Նրանք ուսումնասիրում և դատապարտում են հանցագործությունները և տարբեր ուղիներով արտահայտում իրենց գորակցությունը ցեղասպանության զոհերի ժառանգներին: Դա, մասնավորապես, ակնհայտ է դառնում այնպիսի երկրներում, ինչպիսին Գերմանիան է, որտեղ թրքական և հայկական համայնքներ կան: Այդ պատճառով, Եվրոպայի կենտրոնական և հյուսիսային պետությունների օրենսդիր մարմինները և կառավարությունները ճիշտ խորհուրդ ընդունած կլինեին հաշտեցումը իրականացնելու համար թրքական միզրանթ – համայնքներում ցեղասպանության վերաբերյալ կրթական հատուկ ծրագրեր անցկացնել, չընկրկելով հավանական ազգայնական բողոքների առջև: Այդ նպատակով բավարար չէ երիտասարդ թուրքերին և հայերին պարզապես միասին բերել համերգների կամ այլ մշակութային միջոցառումների՝ առանց հաշվի առնելու ցեղասպանության պաշտոնական ճանաչման նրանց պահանջները:

Ես կցանկանայի օգտվել այս հնարավորությունից, որ այսօր այստեղ ներկա է իմ երկրի ներկայացուցիչը՝ դեսպան Մորելը և հույս հայտնել, որ գերմանական օրենսդիրները և կառավարությունը, գոնե ցեղասպանության հարյուրերորդ տարելիցի առթիվ, վերջապես կձևակերպեն օրենսդրական հստակ որոշում՝ պետական մակարդակով 1,5 միլիոն հայերի և, այնուհետև, առնվազն կես միլիոն արամեալեզու քրիստոնյաների բնաջնջման վերաբերյալ: 2005 թվականին գերմանական խորհրդարանը որոշակիորեն ճանաչել է իր պատասխանավատվությունը 1915թ. կոտորածների և բռնատեղահանումների կապակցությամբ: Այդ պարտավորվածությունը բխում է Գերմանիայի տնտեսական շահերից՝ Բադդադի երկաթուղու կառուցման ժամանակ հայերի տաժանակիր աշխատանքի օգտագործումը և սպանված հայերի ունեցած վարկերը գերմանական բանկերում, գերմանացի զինվորների մասնակցությունը ռճրագործություններին, իսկ ավելի շատ գերմանական կառավարության անտարբերությունը՝ միջամտելու իրադարձություններին, չնայած քաջատեղյակ էին այդ համընդհանուր և իսպառ բնաջնջման մասին: Ընդհակառակը, Կայսերական Գերմանիայի կառավարությունը որոշեց, որ Թուրքիայի հետ իր ռազմական դաշինքը վեր է ամեն տեսակի դատողություններից: 2005 թվականին, չնայած Գերմանիայի Արտաքին Գործերի Գրասենյակի արխիվներում առկա մեծաքանակ վկայություններին, Գերմանիայի օրենսդիրը

խուսափեց պատմական փաստերը բացահայտորեն ընդունել որպես ցեղասպանություն կամ հանցագործություն ընդդեմ մարդկության: Նրանց անվճռական որոշումը հուսախաբ արեց ոչ միայն Գերմանիայի հայ համայնքին, այլև գիտնականներին և մարդու իրավունքների պաշտպան հասարակական կազմակերպություններին, այդ թվում *Working Group Recognition* կազմակերպությանը, որի նախագահը ես եմ: Գերմանիայում ապրող թուրք ազգաբնակչության ոմանց համար օրինակ և չափանիշ է հանդիսանում, թե Գերմանիան ինչպես է վարվում իր ոճրագործ անցյալի՝ նացիոնալ-սոցիալիստների իշխանության և երկրորդ Համաշխարհային պատերազմի ընթացքում կատարված հանցագործությունների հետ, դառնալով տիպար առերեսվելու իրենց սեփական ազգի քրեական անցյալի հետ: Ես անկեղծորեն հույս ունեմ, որ որոշումներ ընդունող իմ պատասխանատու հայրենակիցները ժամանակին կհասկանան իրենց պարտավորությունների կրթական և օրենսդրական կարևորությունը և կգործեն դրան համապատասխան:

Հաջորդ երկու տարիները հարմար առիթ են ընձեռում կրթական և քաղաքական - հիշողության միջոցառումներ իրականացնելու համար: 2014 թվականին լրանում է Առաջին Համաշխարհային պատերազմի սկսման հարյուրամյակը: Քանի որ Եվրոպան և հատկապես Գերմանիան այդ պատերազմից չբաղեցին պետք եղած դասերը, հաջորդեց էլ ավելի սուկալի աշխարհապատերազմ՝ իր հետ բերելով առավել մեծածավալ ցեղասպանություններ:

Ես նաև հուսով եմ, որ մեզ կհաջողվի ավարտել թուրք-օսմանյան ցեղասպանության քրիստոնյա զոհերի համար Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինում կառուցվող էկումենիկ ցեղասպանության հուշահամալիրը: Այս մրցանակի մեծ մասը ես նվիրաբերելու եմ այդ նպատակի համար, սակայն հուշահամալիրի ընդհանուր ծախսը կազմում է մոտ 140 000 եվրո, և, հետևաբար, առջևում դեռ մեծ դրամահավաք ունենք իրականացնելու: Նորից հույս ունենք, որ ժամանակին կստանանք աջակցություն Գերմանայի իշխանություններից, այդ թվում դաշնային կառավարությունից:

Այսօր արդեն ես խոստանում եմ դրամական մրցանակի մնացած մասը տրամադրել Կոնստանդինոպոլսում ապրիլի 24-ին ձերբակալված հայ գրողներից 16-ի գործերի թարգմանության և հրատարակման ծրագրի համար: Դրանց ընթերցումը Բեռլինի հայ, գերմանացի, թուրք և քուրդ քաղաքացիների կողմից կդառնա երկրորդ, թերևս, գրական հուշարձանը այն անհամար, անհայտ և հավերժ լուռ զոհերի, որոնք այդպես էլ գերեզման չունեցան: